

ՎՐԱՍՏԱՆ - ԲԵԼԱՐՈՒՍ

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԱՌԿԱ ՆԵՐՈՒԺԻ ԱՌԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ



Մարտի 22-ին, երկօրյա պաշտոնական այցով, Թբիլիսիում էր գտնվում Բելառուսի նախագահի Ալեքսանդր Լուկաշենկոն: Վրաստանի Բելառուսի նախագահի այցը երկրորդն էր՝ նա առաջին անգամ Թբիլիսի էր այցելել 2015 թվականի ապրիլին:

Թբիլիսիի օդանավակայանում Բելառուսի նախագահին դիմավորեցին Վրաստանի նախագահի Գորգի Մարգվելաշվիլին, պաշտոնական այլ անձինք:

Հավլաբարի նախագահական նստավայրում կայացավ երկու երկրների նախագահների առանձնագրույցը, որից հետո՝ բանակցությունները շարունակվեցին ընդլայնված կազմով:

Պետությունների ղեկավարները քննարկեցին առևտրատնտեսական համագործակցության ներկա վիճակն ու զարգացման հեռանկարները:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՌՈՒՍՏԱՏԱՆԸ ՇԱՐՈՒՆԱՎՈՒՄ Է ԱՊՕՐԻՆԻ ԲՈՒՆԱՉԱՎՈՅՑԻ ԱՐԽԱՉԻՄՅԻ ԵՎ ՅԻՏԻՎԱԼԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԸ»

Մարտի 23-ին, Վրաստանի վարչապետ Գորգի Կվիրիկաշվիլու և Եվրոպայի խորհրդի ժողովրդավարության հարցերով համազեկուցողների խմբի հետ հանդիպմանը, քննարկվեցին Վրաստանում ժողովրդավարական միասնության չորս կետից կազմված բարեփոխումների ընթացքի և երկրի բռնազավթված տարածքներում ստեղծված իրավիճակին առնչվող հարցեր:



Ինչպես նշվեց հանդիպմանը, համազեկուցողների խմբի անդամները դրական գնահատեցին Վրաստանում ներդրվող ժողովրդավարական գործընթացները: Հանդիպմանն ընդգծվեցին Եվրոպայի խորհրդի և Վրաստանի միջև արգասաբեր համագործակցության փաստը և ներ-

գին Եվրոպայի խորհրդի և Վրաստանի միջև արգասաբեր համագործակցության փաստը և ներ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԸ ԿԴԱՌՆԱ ՊԱՏՄԱԿԱՆ ՔԱՅԼ»



Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի նախագահի Գորգի Մարգվելաշվիլին, աշխատանքային այցով, գտնվում էր Ամերիկայի Միացյալ Նահանգներում, որտեղ հանդիպումներ ունեցավ ԱՄՆ օրենսդիր և գործադիր իշխանության բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

Այցի ավարտին՝ Վրաստանի նախագահը հանդիպում ունեցավ ԱՄՆ նախագահի ազգային անվ-

տանգության հարցերով խորհրդական, գեներալ Հերբերտ Ռայնոնդ Մաքմաստերի հետ: Հան-

դիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանի և ԱՄՆ-ի միջև արգասաբեր համագործակցության փաստը և ներ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ



«ՊԱՏԺԱՑՈՒՑԱԿՆԵՐ» ԿԱԶՄԵԼՈՒ ԿՈՉ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

Մարտի 21-ին, Վրաստանի խորհրդարանն ընդունել է բանաձև, որով երկրի կառավարությանը կոչ է անում, մինչև հունիսի 15-ը, հաստատել «Օթխողորիա-Տատունաշվիլի» ցուցակը, որով կներառվեն Աբխազիայի և Յվինվալիի տարածաշրջանում քաղաքացիների իրավունքների խախտման համար մեղադրյալներն ու դատապարտվածները:

Ցուցակում, համաձայն խորհրդարանի բանաձևի, պետք է ներառվեն Վրաստանում սպանության, առևանգման, կտտանքների և ոչ մարդասիրական վարմունքի համար մեղադրյալներն ու դատապարտվածները, ովքեր մարմնական վնասվածքներ են հասցրել Վրաստանի քաղաքացիների առողջությանը՝ Վրաստանի իշխանությունների

իրավասության տակ չգտնվող տարածքներում: «Կառավարությանը կոչ ենք անում միջոցներ ձեռնարկել արդարադատության կատարման և միջազգային կազմակերպությունների ու գործընկեր երկրների կողմից հնարավոր բոլոր սահմանափակումների ընդունման համար, այդ թվում՝

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

Մարտի 16-ին, Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն հանդիպում ունեցավ Վրաստանում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանի հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանի և Հայաստանի միջև միջխորհրդարանական համագործակցության ընդլայնման հեռանկարները:



Իրակլի Կոբախիձեն անդրադառնալով զբոսաշրջության թեմային, մեծ գոհունակությամբ խոսեց այն մասին, որ Վրաստանը հայ զբոսաշրջիկների սիրելի ուղղություններից մեկն է և հավելեց, որ վրացական կողմը դրան մեծ կարևորություն է տալիս:

Ռուբեն Սադոյանը խորհրդարանի նախագահին ներկայացրեց նաև Հայաստանում սահմանադրական բարեփոխումների և կառավարման խորհրդարանական համակարգին անցման ընթացքը:

ՌՈՒԲԵՆ ՍԱԴՈՅԱՆ. «ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՏԵՎՈՒՄ ԵՆ ԱՆՆԱԽԱԴԵՊ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԳԱԿԻ ՎՐԱ»

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆԸ ՍԱՄՑԻՆԵ-ՋԱՎԱԽԵԹԻՈՒՄ

Վրաստանում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը, մարտի 19-22-ին, գտնվում էր Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում:

Այցի շրջանակներում՝ առաջին պաշտոնական հանդիպումը տեղի ունեցավ վիսայի խեռում, որտեղ Սամցխե-Ջավախեթի պե-



(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

ԲԱԶՄԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՅՅԵՂՐԱՎԵՐՆԵՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՉՎՈՒՄ Է

Եվրամիությունը փոխում է այցեգրերի հանձնման կարգը:

Ինչպես նշված է եվրահանձնաժողովի պաշտոնական կայքում, նոր նախաձեռնությունը, առաջին հերթին, կապված է անվտանգության ուժեղացման հետ: Միաժամանակ, բարեփոխման նպատակն է նվազեցնել ժամկետները և դյուրացնել զբոսաշրջության և բիզնես այցեգրերի հանձնումը՝ միջազգային այցելուներին:

Ինչպես հայտարարեց միգրացիայի հարցերով եվրակոմիսար Դմիտրիս Ավրամապուլոսը, նոր նախաձեռնության կիրարկման արդյունքում՝ այցեգրերի հանձնման ժամկետը 15-ից հասցվել է 10 օրվա: Միաժամանակ, եվրամիության երկրներ այցելել

ցանկացողները կարող են այցեգրի հայցը լրացնել այցելությունից վեց ամիս շուտ: Այսօր արդեն այդ ժամկետը նվազեցվել է՝ մինչև երեք ամիս: Միաժամանակ, հայցը հնարավոր կլինի ներկայացնել էլեկտրոնային ձևաչափով:

Բարեփոխումը նախատեսում է նաև բազմակի օգտագործման այցեգրերի ժամկետի երկարաձգում՝ մեկից մինչև հինգ տարի: Նման այցեգրեր կտրվի դյուրացված ընթացակարգով այն դիմորդներին, ովքեր ունեն ուղեւորությունների երկարատե և դրական պատմություն:

Նոր նախաձեռնությունը նախատեսում է այցեգրային գանձումների 25 տոկոսի ավելացում՝ 60-ից մինչև 80 եվրո:

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԸ ԿԴԱՌՆԱ ՊԱՏՄԱԿԱՆ ՔԱՅԼ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տարածաշրջանում գործընթացների զարգացումը, մարտահրավերների ծագումը եւ նշեցին, որ այդ գործընթացներում ԱՄՆ ներգրավվածությունը տարածաշրջանի անվտանգության կարեւորագույն գործոնն է: Վրաստանի նախագահը հանդիպմանը բարձրացրեց նաեւ Ցխինվալիի տարածաշրջանում Վրաստանի քաղաքացի, նախկին խաղաղա-


րար Արչիլ Տատունաշվիլու սպանության թեման:

Վաշինգտոնում Heritage Foundation հետազոտական կենտրոն այցելության ժամանակ, Վրաստանի նախագահը խոսեց այցի շրջանակներում ձեւակերպված Վրաստանի պաշտպանության ակտի մասին՝ նշելով, որ դրանով իսկ ընդգծվել է Վրաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ երկարաժամկետ ռազմավարական հարաբերությունների կարեւորությունը: Մարգ-



վելաշվիլու խոսքով, Վրաստանի աջակցության ակտը երկրի համար պատմական քայլ է, որն օրենսդրական մա-

կարդակով էլ ավելի է ամրացնում Վրաստանի կարգավիճակը՝ որպէս ԱՄՆ հատուկ դաշնակցի:



ՌՈՒՍԱՍՏԱՆ

Վ ՊՈՒՏԻՆԸ ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԶԱՂԹԵՑ ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՈՎ

Ռուսաստանի Դաշնության գործող նախագահ Վլադիմիր Պուտինը, մարտի 18-ի նախագահական ընտրությունների արդյունքների նախնական հաշվարկով, հավաքել է քվեարկողների ձայների 76,67 տոկոսը:

ՌԴ նախագահ Պուտինն իր քաղաքական կարիերայի ընթացքում հավաքել է առավելագույն ձայները. նրա օգտին քվեարկել է 54,4 մլն քաղաքացի, ինչը 5,1 միլիոնով ավելի է, քան 2004 թվականին: Բացի այդ, նրա օգտին քվեարկողների թիվն ավելին է, քան մյուս բոլոր թեկնածուներինը միասին վերցրած:

Ընտրությունների արդյունքում՝ 11,79 տոկոս ձայներով երկրորդ տեղում է Ռուսաստանի Դաշնության կոմունիստական կուսակցության թեկնածու Պավել Գրուդինինը, իսկ 5,66 տոկոսով երրորդ տեղում՝ Ռուսաստանի լիբերալ-դեմոկրատական կուսակցության առաջնորդ Վլադիմիր ժիրինովսկին: Նրան հաջորդում է հաղորդավարուհի Քսենիա Սոբչակը՝ 1,67 տոկոս:

ԶԻՆԱՍՏԱՆ

ՍԻ ՑՁԻՆՊԻՆԸ ՎԵՐԸՆՏՐՎԵՑ ԵՐԿՐԻ ՆԱԽԱԳԱՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ

Չինաստանի խորհրդարանի պատգամավորները նախագահի պաշտոնում միաձայն վերընտրել են Սի Ցզինպինին եւս հինգ տարի ժամկետով: Ներկա գտնված բոլոր 2970 պատգամավորները միաձայն կողմ են քվեարկել:

Սի Ցզինպինը Չինաստանի նախագահ էր ընտրվել 2013-ի մարտին 12-րդ գումարման խորհրդարանի նիստում:

Բացի այդ, նա նաեւ ընտրվել է Չինաստանի Կենտրոնական ռազմական խորհրդի նախագահ՝ իր ձեռքում պահելով երկրի քաղաքական եւ ռազմական ղեկավարումը:

Սինչ այս տարի մարտի 11-ը նախագահը կարող էր ընտրվել հինգ տարի ժամկետով եւ պաշտոնը զբաղեցնել ոչ ավելի քան երկու անգամ: Սակայն Չինաստանի խորհրդարանի պատգամավորներն այս նստաշրջանում փոփոխություններ են կատարել սահմանադրությունում՝ վերացնելով պաշտոնավարման ժամկետի սահմանափակումները:

ՖՐԱՆՍԱ

ՆԻԿՈԼԱ ՍԱՐԿՈՋԻՆ՝ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ

Ֆրանսիայի ոստիկանությունը երկրի նախկին նախագահ Նիկոլա Սարկոզիին կալանքի տակ է վերցրել 2007 թվականի իր նախագահական ընտրարշավի Լիբիայի կողմից հնարավոր ֆինանսավորման հետաքննության մեղադրանքով:

ԵՄ-ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

BREXIT-ԻՑ ԴԵՏՈ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆԸ ԿՏԵՎԻ 21 ԱՄԻՍ

ԵՄ-ն եւ Մեծ Բրիտանիան համաձայնության են հասել, որ, եվրամիությունից Սի-ացյալ Թագավորության դուրս գալուց հետո, անցումային ժամանակաշրջանը կկազմի 21 ամիս, այսինքն՝ կավարտվի 2020 թվականի դեկտեմբերի վերջին:

Ավելի վաղ կողմերը նաեւ պայմանավորվել են, որ Լոնդոնը կշարունակի ԵՄ-ի բյուջե մուծումներ կատարել մինչեւ 2020 թվականի ավարտ:

ՎՐԱՍՏԱՆ - ԲԵՆԱՌՈՒՄ

ՔՆՆԱՐԿՎԵՅԻՆ ԱՌԿԱ ՆԵՐՈՒԺԻ ԱՌԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՇԵՌԱԿԱՐՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կարները: Անդրադարձ կատարեցին նաեւ քաղաքականության բնագավառում համագործակցության հարցերին, միջազգային հարթակներում երկրների շփումներին, աշխարհի ու տարածաշրջանի իրադրությանը: Բանակցությունների արդյունքներով ստորագրվեցին տարբեր ոլորտներում համագործակցության մի շարք փաստաթղթեր:

Երկու երկրների նախագահները բանակցությունների արդյունքները հանրագումարեցին համատեղ մամուլի առկայությամբ:

Այցի շրջանակներում կայացավ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու եւ Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի հանդիպումը:

Հանդիպմանը հիմնական շեշտը դրվեց երկու երկրների միջեւ տնտեսական կապերի խորացման, ապրանքաշրջա-

նառության ծավալների ընդլայնման, երկու երկրներում առկա ներուժի լիարժեք օգտագործման վրա:

Պաշտոնական այցի շրջանակներում Բելառուսի նախագահը հանդիպում ունեցավ նաեւ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա երկրորդի հետ:

Բելառուսի նախագահի պաշտոնական այցի շրջանակներում՝ Թբիլիսիում անցկացվեցին Սինսկի օրեր եւ վրաց-բելառուսական գործարար ֆորում:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԿԱՇՎԻԼԻ. «ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՀԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԱՊՕՐԻՆԻ ԲՈՆԱԶԱՎԹԵԼ ԱՐԽԱՉԻԱՅԻ ԵՎ ՃԻՆԻՎԱԼԻ ՏԱՐԱԾԱՆԵՐՈՒՄՆԵՐԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կայացվեց երկկողմ առավել սերտ հարաբերությունների հաստատման պատրաստակամություն:

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հանդիպմանը նշեց, որ Ռուսաստանը շարունակում է ապօրինի բռնազավթել՝ Աբխազիայի եւ Ցխինվալիի տարածաշրջանները եւ այդ գործընթացն արժանացել է համապատասխան գնահատման միջազգային հանրության կողմից: Համազեկուցողների խմբի անդամները կրկին ընդգծեցին իրենց կազմակերպության հստակ դիրքորոշումը՝ ուղղված Վրաստանի խանութային ամբողջականության պաշտպանությանը:

ժաշրջանները եւ այդ գործընթացն արժանացել է համապատասխան գնահատման միջազգային հանրության կողմից: Համազեկուցողների խմբի անդամները կրկին ընդգծեցին իրենց կազմակերպության հստակ դիրքորոշումը՝ ուղղված Վրաստանի խանութային ամբողջականության պաշտպանությանը:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

«ՊԱՏԺԱՑՈՒՑԱԿՆԵՐ» ԿԱԶՄԵԼՈՒ ԿՈՉ՝ ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

այցեգրային, գույքային սահմանափակումների համար եւ այն անձանց ֆինանսական գործառնությունների համար, ովքեր նշված են «Օթխագորիա-Տատունաշվիլի» ցուցակում», - ասված է Վրաստանի խորհրդարանի կողմից ընդունված բանաձեւում:

Նշենք, որ Վրաստանի խորհրդարանը վերոնշյալ բանաձեւը հաստատեց Ցխինվալիի հիվանդանոցում

փետրվարի 22-ին Վրաստանի քաղաքացի Արչիլ Տատունաշվիլու վախճանից հետո՝ մահվան պատճառը Ցխինվալիի դե-ֆակտո իշխանությունները համարեցին սրտի անբավարարությունը, իսկ Վրաստանի ՆԳ նախարարությունն այդ հարցով հարուցեց քրեական գործ՝ «Կանխամտածված սպանություն» հոդվածով:

Ինչ վերաբերում է Գիգի Օթխագորիային, ապա, նա մահացու վիրավորվել էր հրազենից Ջուզգիդիի շրջանի

Խորչա գյուղում, 2016 թվականի մայիսի 19-ին՝ Աբխազիայի վարչական սահմանի մոտակայքում: Սպանությունից երկու օր անց, Վրաստանի զլխավոր դատախազությունը հրապարակեց մեղադրյալի անունը՝ Աբխազիայի դե-ֆակտո սահմանապահ ծառայության ներկայացուցիչ Ռաշիդ Քանջի-օղլիի: Ջուզգիդիի քաղաքային դատարանը, կանխամտածված սպանության համար, նրան հեռակա դատապարտեց 14 տարվա ազատազրկման:

ՀԱՍՏԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԿԻՐԱՐԿՎՈՒՄ Է ՏԱՐԱԾԱՆԵՐՁԱՆԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ



Քը ստորագրեցին նոր նախագծի իրականացման համաձայնա-

գիր, որը նպաստելու է Վրաստանում տարածաշրջանային եւ տեղական զարգացմանը:

Ինչպես տեղեկացրին գերատեսչությունից, նոր նախաձեռնությունը երկարաժամկետ այն օգնության մի մասն է, որը UNDP-ը իրականացվում է Շվեյցարիայի եւ Ավստրիայի կառավարությունների ֆինանսական աջակցությամբ:

Համաձայնագրի ստորագրման միջոցառումների շրջանակներում անցկացվեց արդյունքների շնորհանդես, որն ուղղված էր Վրաստանում հասարակական սպասարկումների մակարդակի բացահայտմանը:

գիր, որը նպաստելու է Վրաստանում տարածաշրջանային եւ տեղական զարգացմանը:

Ինչպես տեղեկացրին գերատեսչությունից, նոր նախաձեռնությունը երկարաժամկետ այն օգնության մի մասն է, որը UNDP-ը իրականացվում է Շվեյցարիայի եւ Ավստրիայի կառավարությունների ֆինանսական աջակցությամբ:

Համաձայնագրի ստորագրման միջոցառումների շրջանակներում անցկացվեց արդյունքների շնորհանդես, որն ուղղված էր Վրաստանում հասարակական սպասարկումների մակարդակի բացահայտմանը:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

ՑՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՇՆՈՐՀՎԵՑ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԺՈՒՆԱԼԻՍԻԻ ԿՈՉՈՒՄ

Մարտի 21-ին Վրաստանում նշվում է Վրաց ժուռնալիստիկայի օրը: Այդ առիթով Վրաստանի ժուռնալիստների ստեղծագործական միությունը «Վրաստանի վաստակավոր ժուռնալիստի» կոչում շնորհեց երկրի ՋԼՄ-ների մի շարք ներկայացուցիչներին:

Կոչում ստացողների թվում է «Վրաստան» թերթի խմբագրի տեղակալ Յուրի Պոդոյանը: Նշենք, որ թերթի խմբագրությունում Յ.Պոդոյանն աշխատում է 1995 թվականից, տարբեր տարիներին զբաղեցնելով թարգմանչի, տեղեկատվական ծառայության ղեկավարի, պատասխանատու քարտուղարի, ապա՝ խմբագրի տեղակալի պաշտոնը:

Մինչ այդ, շուրջ 12 տարի՝ որպես խմբագիր աշխատել է Վրացական ռադիոյի հայկական հաղորդումների խմբագրությունում:

Հավելենք, որ Վրաստանի վաստակավոր ժուռնալիստի կոչմանն արժանացավ նաեւ Թբիլիսիում լույս տեսնող «Վեչերնի Տբիլիսի» («Երեկոյան Թբիլիսի») թերթի խմբագրի տեղակալ Նանա Մելիք-Օհանջանովան:

«Վրաստան» թերթը շնորհավորում է երկրի Ջանգվածային լրատվության միջոցների բոլոր ներկայացուցիչներին եւ մասնավորապես, կոչման եւ պարգևի արժանացած մեր գործընկերներին:



Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԷԿՈՆՈՄԻԿԱ

ԴՄԻՏՐԻ ՔՈՒՄՍԻՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃՐ ԿԼԻՆԻ ԱՍԵՆԱԲԱՐՁՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ»

Բացառված չէ, որ 2018-2020 թվականներին տարածաշրջանի երկրների միջև Վրաստանի տնտեսական աճը լինի ամենաբարձրը:

Այդ մասին հայտարարեց Վրաստանի առաջին փոխվարչապետ, Էկոնոմիկայի եւ կաշտի գարգացման նախարար Դմիտրի Քումսիշվիլին Եւրոյթ ունենալով վրաց-բելառուսական բիզնես-ֆորումում: Յենվելով վիճակագրական ծառայության կողմից ներկայացված տվյալների վրա, փոխվարչապետը հայտարարեց, որ 2017 թվականի չորրորդ եռամսյա-

կում Վրաստանի ՀՆԱ-ն ընթացիկ գներով կազմել է 10572,3 միլիոն լարի, ինչը 5,4 տոկոսով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը:


«2018 թվականին Վրաստանում սկսվեց զգալի տնտեսական աճ: Նախնական տվյալներով, 2018 թվականի հունվարին տնտեսական աճը կազմել է 4,4 տոկոս: Կառավարության կանխագծումներով, 2018

թվականին տնտեսական աճը կկազմի 4.5 տոկոս: Բացառված չէ, որ 2018-2020 թվականներին տարածաշրջանների երկրների միջև Վրաստանը կունենա ամենաբարձր տնտեսական ցուցանիշը, միջին 4,9 տոկոսի չափով»,- հայտարարեց Դմիտրի Քումսիշվիլին:

Փոխվարչապետն անդրադարձավ երկրում ստեղծված բիզնես միջավայրին եւ նշեց, որ վերջին մի քանի տարիների ընթացքում անցկացված



բարեփոխումները դրական ազդեցություն գործեցին երկրում բիզնես միջավայրի բարելավման ուղղությամբ Վրաստանի միջազգային վարկա-նիշային ցուցանիշների վրա:



ԱՐԶԻԼ ՏԱՏՈՒՄԱՇՎԻԼՈՒՆ ԿՅՈՒՂԱՐԿԱՎՈՐԵՆ ԵՐԱՅՐԱԿԱՆ ԳԵՐԵՋՄԱՆԱՏԱՆԸ



Անջատողական Ցխիմվալիի տարածաշրջանի դեֆակտո իշխանությունները, ի վերջո, մարտի 21-ին Վրաստանին հանձնեցին դեռևս ընթացիկ տարվա փետրվարի 22-ին դիմակայության գոտուց առևանգված եւ Ցխիմվալիի բանտում սպանված, նախկին զինծառայող, 36-ամյա Արչիլ Տատունաշվիլու աճյունը:

Վրաստանի դեկավարության որոշմամբ, Արչիլ Տատունաշվիլուն, զինվորական պատվով, հողին կհանձնեն այսօր՝ մարտի 24-ին, Թբիլիսիի Մուխաթավերդիի եղբայրական գերեզմանատանը:

ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ

ՊԱՅՄԱՆԱՎԱՐԳ՝ ՍԵՐԲԻԱՅԻ ՀԵՏ

Սերբիայի արտաքին քաղաքական գերատեսչության հայտարարության համաձայն, Վրաստանի քաղաքացիները կարող են առանց այցեզրերի մեկնել Սերբիա:

Անայցեզրային պայմանակարգի մասին փաստաթուղթը մարտի 7-ին ստորագրվեց Բելգրադում՝ Վրաստանի փոխվարչապետ, ԱԳ նախարար Միխեիլ Ջանելիժեի պաշտոնական այցի ժամանակ: Այսուհետև, Վրաստանի քաղաքացիներն առանց այցեզրի Սերբիայում կկարողանան գտնվել մինչև 30 օր:

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԹԻ» ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱՆ՝ «ՈՒՄՆԱՎԻ-2»-Ի ՄՈՏ

Մարտի 20-ին, «Վրացական երթ» հասարակական կազմակերպության ակտիվիստները, բողոքի ցույց անցկացրին «Ռուսթալի-2» հեռուստաընկերության կենտրոնակայանի մոտ: Նրանք բողոքարկում էին հեռուստաընկերության եթերով հեռարձակված հաղորդումները: Հեռուստաընկերության լրագրողների եւ շարժման ակտիվիստների միջև տեղի ունեցավ դիմակայություն, որի ընթացքում լրագրողներից մեկը՝ Գիորգի Գաբունիան, ֆիզիկական վնասվածքներ ստացավ: Շտապ օգնության մեքենայով նրան տեղափոխել են հիվանդանոց:

«Ռուսթալի-2» հեռուստաընկերության շենքի մոտ տեղի ունեցած միջադեպի հետ կապված, պարեկային ոստիկանության կողմից ձերբակալվել է մի քանի անձ:

Տեղի ունեցածի առիթով քրեական գործ է հարուցվել:

ԱՄՆ OAK HILL

ՈՒՋՄԱՆԱԿԸ ԲԱԹՈՒՄԻՈՒՄ

ԱՄՆ-ի ռազմածովային ուժերի Վեցերորդ օպերատիվ նավատորմի Oak Hill դեսանտային նավը ժամանել է Բաթումիի նավահանգիստ:

Oak Hill-ը նախկինում երբեք չի մտել Վրաստանի տարածքային ջրեր: Սպասվում է, որ առաջիկա օրերին ամերիկյան ռազմանավը կժամանի սեւծովյան տարածաշրջանի եւս մի քանի նավահանգիստ եւ կմասնակցի դաշնակիցների ու գործընկեր երկրների նավատորմերի հետ ԱՄՆ-ի երկկողմ գործակալություններին: ԱՄՆ-ի Oak Hill-ի հրամանատարը Ֆիլիպ Նայթն է: Նավի անձնակազմ ունի 400 անդամ եւ 22 սպա: Ռազմանավը Բաթումիից մեկնեց մարտի 20-ին:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ԱՄՆ ԿՈՆԳՐԵՍԸ ՎՐԱՍՏԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՐԵԼ Է 105 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ

ԱՄՆ կոնգրեսը, որպես օգնություն, Վրաստանին հատկացրել է 105 միլիոն դոլար: Այդ մասին նշված է ԱՄՆ 2018 թվականի ֆինանսական տարվա բյուջեի նախագծում:

Ըստ բյուջեի նախագծի գրանցման, օգնության կարգով Վրաստանին հատկացվում է 105 325000 դոլար, իսկ Ուկրաինային՝ առնվազն 420700000 դոլար:

Նշենք, որ վերոնշյալ գումարը ներառված չէ Ուկրաինային 200 միլիոն դոլարի սահմաններում նախատեսված ռազմական օգնության մեջ:

Նշենք, որ մոտ օրերս կոնգրեսում կանցկացվի ԱՄՆ 2018 թվականի բյուջեի նախագծի քվեարկությունը, որից հետո փաստաթուղթը ներկայացվելու է նախագահ Դոնալդ Թրամփի հաստատմանը:

Նշենք, որ արտաքին ներդրումային ծրագիրը Եվրամիության մոտ նախաձեռնությունն է, որը նախատեսում է առաջիկա չորս տարիների ընթացքում 4,1 միլիարդ Եվրոյի հատկացում Եվրամիության հարեւան երկրներում, այդ թվում՝ արելեյան գործընկերության երկրներում պետական եւ մասնավոր հատվածների խրախուսման համար:

48 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Բյուջետային նախագծի աջակցության շրջանակներում՝ Եվրամիությունը Վրաստանին կցուցաբերի 48 միլիոն Եվրոյի օգնություն:

Այդ գումարը ներդրվելու է երեք ուղղություններով, մասնավորապես՝ ֆինանսական ենթակառուցվածքի արդիականացման, նորարական բիզնես մոդելների ստեղծման խրախուսման, կարծ ժամանակահատվածներում բիզնես վե-

ճերի գործով արդարացի որոշումների ընդունման, ինչպես նաեւ՝ երկրում գործարարության զարգացման աջակցության համար:

Մեկնաբանելով Եվրամիության վերոնշյալ որոշումը, Վրաստանի առաջին փոխ-

վարչապետ, Էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Դմիտրի Քումսիշվիլին հայտարարեց, որ Եվրամիության մոտ նախագիծը կնպաստի մոտ աշխատատեղերի ստեղծմանը, ներդրումների գրավմանը, նորարարության զարգացման եւ, վերջին հաշվով, Եվրամիության երկրների Վրաստանին մերձեցմանն ու ինտեգրացմանը:

Նշենք, որ արտաքին ներդրումային ծրագիրը Եվրամիության մոտ նախաձեռնությունն է, որը նախատեսում է առաջիկա չորս տարիների ընթացքում 4,1 միլիարդ Եվրոյի հատկացում Եվրամիության հարեւան երկրներում, այդ թվում՝ արելեյան գործընկերության երկրներում պետական եւ մասնավոր հատվածների խրախուսման համար:

ԱՅԼԸՆՏՐԱՆՔ

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ՝ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Քաղաքացիները, ովքեր կրոնական կամ այլ պատճառներով խուսափում են զինվորական պարտադիր ծառայությունից, այլընտրանքային ծառայություն կանցնեն արտակարգ իրավիճակների վարչությունում:



Համապատասխան օրենսդրական փոփոխությունների շուրջ, ներկայումս սկսել են աշխատել պաշտպանության եւ անվտանգության խորհրդարանական կոմիտեն ու արտակարգ իրավիճակների վարչության ծառայությունը:

Ինչպես հայտարարեց վարչության ծառայության պետի տեղակալ Շալվա

Խուցիշվիլին, այլընտրանքային զինվորական ծառայություն անցած քաղաքացին կկարողանա աշխատել հենց այդ գերատեսչությունում: «Արտակարգ իրավիճակների ծառայություն զորակոչվածների համար կստեղծվեն հատուկ պայմաններ, նրանք կկարողանան յուրացնել փրկարար իրջեցների մասնագիտու-

թյունը, ապա՝ կկարողանան աշխատել այդ մասնագիտությամբ»,- հայտարարեց Շալվա Խուցիշվիլին՝ հավելելով, որ այլընտրանքային ծառայության զորակոչված քաղաքացիները հիմնականում կիրականացնեն օժանդակ գործառույթներ, որպեսզի նրանց կյանքին սպառնալիք չծագի:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՄԻԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ «ԳՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՎ» ՀԱՐՑԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ

Վրաստանի ՆԳ նախարարության նախաձեռնությամբ, խտացվում է, այսպես կոչված, «գողական աշխարհի» մասին օրենսդրությունը:

Ինչպես հայտարարեց ՆԳ փոխնախարար Նաթիա Մեծվրիշվիլին, մասնավորապես, քրեական պատասխանատվություն է նախատեսված «գողական աշխարհի» հետ կապի համար: «Օրինակ, մինչ օրս իրավախախտում չէր համարվում քրեական հեղինակությանը կամ «գողական աշխարհի» ներկայացուցչին դի-

մելը: Նրանից հետո, երբ խորհրդարանը կընդունի այդ օրենքը, անձինք, ովքեր վեճի կարգավորման համար կդիմեն հանցագործ աշխարհի ներկայացուցչին կամ «օրենքով գողին», կենթարկվեն քրեական պատասխանատվության»,- հայտարարեց Նաթիա Մեծվրիշվիլին՝ հավելելով, որ տվյալ պարագայում խոսքը մի-

այն քաղաքացիների պատժի մասին չէ, այլ՝ օրինանախագիծը լրիվությամբ ուղղված է հանցագործ հասարակության անդամների դեմ:

Վերոնշյալ օրինանախագիծը նախատեսում է նաեւ քրեական պատասխանատվություն ցանկացած անձի նկատմամբ՝ հանցագործ հասարակությանը ցուցաբերած ֆինանսական, նյութական կամ այլ աջակցության համար: Ավելացվում են նաեւ քրեական պատժամակետ-

ները քրեական հասարակության անդամության համար: Ներկայիս 5-ից մինչև 8 տարվա ազատազրկման փոխարեն, այդ ժամկետը հասցվում է յոթից՝ 10 տարվա, իսկ, այսպես կոչված, «օրենքով գողի» կարգավիճակի համար պատժամակետը կկազմի 9-ից՝ 15 տարի:

Նշենք, որ վերոնշյալ օրինանախագիծն արդեն քննարկվում է խորհրդարանի իրավաբանական հարցերի կոմիտեում:

ՎՐԱՍԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՈՒԲԵՆ ՍԱՊՅԱՆ. «ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՏԵՎՈՒՄ ԵՆ ԱՆՆԱԽԱԴԵՊ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ»

ՎՐԱՍԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՄՊԱՆԸ ՍԱՄՑԻՆԵ-ՋԱՎԱԽԵԹԻՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տական լիազոր-նահանգապետ Ակակի Մաճուտաձեն ջերմ հանդիպում ունեցավ եւ գրուցեց Ռուբեն Սաղոյանի հետ:

Հանդիպմանը ներկա էին նաեւ Ախալցխի շրջանից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Գիրգի Կոպաձեն, Թբիլիսիի Իսանիի շրջանից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Դավիթ Գիճինաձեն, Ախալքալաքի խորհրդարանի համամասնական պատգամավոր Սամվել Մանուկյանը, Ախալցխի քաղաքապետ Ջազա Մելիքիձեն, Ախալցխի սակրեբուլոյի մեծամասնական պատգամավոր Համբարձում Բաբոյանը եւ ուրիշներ:

Հանդիպմանը քննարկվող թեմաներն առնչվում էին Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանի տնտեսական, սոցիալական եւ մշակութային բնագավառներին: Ստեղծվող փոխանակվեցին տարածաշրջանային տնտեսական ու սոցիալական ծրագրերի, ենթակառուցվածքների արդիականացման, ապակենտրոնացված համագործակցության շուրջ:

Ախալցխից, Հայաստանի դեսպանն այցելեց տեղի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եւ Սուրբ Նշան եկեղեցիներ, հանդիպում ունեցավ Ախալցխի հայ բնակչության ներկայացուցիչների հետ: Ռուբեն Սաղոյանն այցելեց նաեւ Ախալցխի երիտասարդական կրթամշակութային կենտրոն, որտեղ հանդիպեց կենտրոնի ուսուցիչներին եւ սաներին: Ապա՝ Ռուբեն Սաղոյանն այցելեց մունիցիպալիտետի Ծուղրուք գյուղը, որտեղ պահվում է Ծուղրուքի հռչակավոր Ավետարանը: «Ծուղրուքի Ավետարանը» (Հովհաննեսի Ավետարան) հայերեն մագաղաթյա ձեռագիր-մատյանը: Այն գրվել է 974 թվականին:

Մարտի 20-ին, Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սաղոյանը Ախալքալաքի հանդիպում ունեցավ Ախալքալաքի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետներից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Հենզել Սկոյանի, Թբիլիսիի Իսանիի շրջանից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Դավիթ Գիճինաձեի, Վրաստանի խորհրդարանի համամասնական պատգամավոր Սամվել Մանուկյանի, Ախալքալաքի քաղաքապետ Յուրիկ Ունանյանի, սակրեբուլոյի նախագահ Նաիրի Իրիցյանի հետ: Հանդիպմանը մասնակցեց նաեւ Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանը:

Դեսպանին ներկայացվեցին մունիցիպալիտետում իրականացվող ծրագրերը, քննարկվեցին շրջանի առջեւ ծառայած մի շարք խնդիրներ:

Այնուհետեւ վարչության նիստերի դահլիճում Ռուբեն Սաղոյանը հանդիպում ունեցավ Ախալքալաքի եւ հարակից գյուղերի բնակիչների ներկայացուցիչների հետ, պատասխանեց ներկայություն հետաքրքրող հարցերին: Դեսպանն ընդգծեց Թբիլիսիի հետ Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանի հայ բնակչության կապի ամրապնդման եւ վրաց լեզվի ուսուցման կարեւորությունը:

Խոսելով Ջավախեթի վերադառնալու պարտադիր պայմանով Հայաստանի բուհերում ջավախահայ ուսանողների տեղերի ավելացման շուրջ, դեսպանը նշեց. «Ցավոք, երիտասարդները չեն գնում Թբիլիսի սովորելու: Քանի որ դուք ապրում եք Վրաստանում, այս լեզուն ձեզ իրոք անհրաժեշտ է: Դուք ասացիք, որ չիմանալով վրացերենը, չեք օգտվում շատ առավելություններից, որոնք առաջարկվում է Վրաստանի կառավարությունը: Այն, ինչ տալիս են Հայաստանի բուհերը, կան նաեւ Վրաստանի քաղաքապետարանում

տանի բարձրագույն ուսումնական հաստատություններում: Ո՞վ է ձեզ ասում, որ կկորցնեք մեր ինքնությունը, եթե սովորեք այն երկրի լեզուն, որտեղ ապրում եք»,- ընդգծեց Ռուբեն Սաղոյանը:

Հանդիպմանը՝ հարցերից մեկն առնչվեց երկլեզու դասագրքերին: «Ինչպես գիտեք, մեր դպրոցներում երկլեզու դասագրքեր են եւ աշակերտների համար բարդ է վրացերենով սովորել: Ի՞նչ կասեիք այդ մասին» հարցին ի պատասխան Ռուբեն Սաղոյանը նշեց. «Ես հորդորում եմ, իմ խորհուրդն է անպայման սովորել վրացերեն, անպայման: Վրացերեն լեզուն նույնքան կարեւոր է ձեր համար, որքան մայրենի լեզուն: Դուք ապրում եք Վրաստանում, Վրաստանի իշխանությունները հոգ են տանում ձեր համար, շատ ապրեն իրենք: Ոչ միայն

Վրաստանում, այլեւ աշխարհի մեկ այլ երկրում ապրող հայը պետք է այնքան սիրի, հարգի երկրի օրենքները, որ անպայման սովորի եւ իմանա այդ երկրի լեզուն: Դուք դրանցից մեկն եք: Դուք ապրում եք Վրաստանում եւ պարտադիր պետք է իմանաք վրաց լեզուն ու պատմությունը»,- նշեց դեսպանը եւ՝ անդրադառնալով հարցին, որ ջավախահայերը վերջին տարիներին ավելի շատ նախընտրում են Թբիլիսիում բարձրագույն կրթություն ստանալ, քան Հայաստանում, պատասխանեց. «Իրականում դա շատ լավ է, ոչ մի վատ բան, կատաստրոֆիկ բան չկա, Թբիլիսիի համալսարաններում նույնպես տալիս են շատ որակյալ կրթություն, ինչպես նաեւ՝ Հայաստանի համալսարաններում: Շատ նորմալ է, եթե մարդիկ գնում են սովորելու նաեւ Թբիլիսի: Շատ լավ է, որ մեր երիտասարդները սովորեն Վրաստանում, բարձր դիրք ունենան, եւ այդպիսով վրաց եւ հայ ժողովուրդներ-

ընդհանուր քաղաքապետարանից» եւ հավելեց, որ դեսպանատունը այդ քայլին դիմում է տեղի բնակչության հյուպատոսական ծառայության ստացման ընթացակարգի ոլորտում նպատակով:

Հանդիպման ավարտին, Ռուբեն Սաղոյանը Սփյուռքի նախարարության «Պողոս Նուբար» մեդալով պարգևատրեց Սայաթ եւ Խաչատուր Սահարյան եղբայրներին՝ Գուճըրդո գյուղի Սուրբ Խաչ մատուռի կառուցման համար:

Ախալքալաքիում Ռուբեն Սաղոյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանի ուղեկցությամբ, այցելեց տեղի Սուրբ Խաչ եկեղեցի եւ Սամցխե-Ջավախեթի ու Ծավալայի ընդհանուր առաջնորդական փոխանորդության նստավայր, որտեղ ներկայություն ունկնդրեցին երգչախմբի կատարումները:

Դեսպանը Գուճըրդո գյուղում հյուրընկալվեց տեղի նորակառույց դպրոցում եւ Ախալքալաքի երիտասարդական կրթամշակութային կենտրոնում:

Մարտի 21-ին, Սամցխե-Ջավախեթի տարածաշրջան կատարած այցի շրջանակներում, Վրաստանում Հայաստանի դեսպան Ռուբեն Սաղոյանն այցելեց Նինոծմինդա, որտեղ հանդիպում ունեցավ Նինոծմինդայի քաղաքապետ Անի Մոսոյանի, մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Սմբատ Կյուրեղյանի, մունիցիպալիտետի գյուղատնտեսության, առողջապահության, կրթության, մշակույթի ոլորտների ներկայացուցիչների հետ, պատասխանեց նրանց հետաքրքրող հարցերին:

Պատասխանելով հայ-վրացական հարաբերություններին առնչվող հարցերին, դեսպանը շեշտեց, որ այսօր այդ կապերն աննախադեպ բարձր մակարդակի վրա են գտնվում: Այս հարցում մեծ դեր են կատարում Հայաստանի եւ Վրաստանի բարձրագույն իշխանությունների ղեկավարների միջանձնական շատ ջերմ հարաբերությունները, որոնք իրենց արտացոլում են գտնում երկկողմ հարաբերություններում: Այս համատեքստում Ռուբեն Սաղոյանն իր խորին շնորհակալությունը հայտնեց Վրաստանի ներկայիս իշխանություններին, որոնք Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանի հայ բնակչության համար ստեղծում են բարվոք պայմաններ, եւ նրանց խնդիրները պահում՝ մշտական ուշադրության կենտրոնում:

Նինոծմինդայում կայացած հանդիպմանը, Վրաստանում Հայաստանի դեսպանն անդրադառնալով ջավախահայության վրացերենի ուսումնառության հիմնախնդրին, կոչ արեց՝ մեծ ուշադրություն դարձնել վրաց լեզվի ուսուցմանը, քանի որ դա առանձնակի կարեւորություն է իրենից ներկայացնում:

Նինոծմինդայում Ռուբեն Սաղոյանը ծաղիկներ խոնարհեց Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողին, ապա ծաղկեփունջ դրեց հայ եւ վրաց ժողովուրդների եղբայրությունը խորհրդանշող «Հայոս-Քարթլոս» արձանի առջեւ:

Նինոծմինդայում Ռուբեն Սաղոյանն այցելեց Սուրբ Սարգիս եկեղեցի, «Ռաֆայել Ջավախ» կրթամշակութային երիտասարդական կենտրոն, ինչպես նաեւ՝ Վահան Տերյանի տուն-թանգարան Գանձա գյուղում:

Նույն օրը Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպանը վերադարձավ Թբիլիսի:



Ախալքալաքի քաղաքապետարանում



Նինոծմինդայի քաղաքապետարանում



Ախալքալաքի հանդիպում բնակիչների հետ



Նինոծմինդա. ծաղիկների խոնարհում Եղեռնի զոհերին նվիրված հուշարձանին

րի բարեկամությանն ավելի օգտակար լինեն»,- նշեց Ռուբեն Սաղոյանը:

Ի պատասխան շրջանում գործազրկության բարձր մակարդակի եւ դրա կարգավորման համար մունիցիպալիտետ ներդրումներ գրավելու նպատակով դեսպանի կողմից հայաստանյան «Լժակները» օգտագործելու մասին հարցին, Ռուբեն Սաղոյանն ասաց, որ պետք է հույսը դնել ոչ թե հայաստանյան գործարարների, այլ՝ Ախալքալաքի, Նինոծմինդայի եւ Ախալցխի գործարարների վրա:

Նա նշեց, որ այստեղ շատ կան հարուստ մարդիկ, ովքեր զբաղվում են բիզնեսով, եւ նրանք պետք է այստեղ ստեղծեն նոր աշխատատեղեր, եւ պետք է հույսը կապել նրանց հետ: Դեսպանը նշեց նաեւ, որ Վրաստանի կառավարությունը արդյունավետ աշխատանք է կատարում երկրում գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ:

Դեսպանն ասաց, որ. «Այսուհետ, Ախալքալաքիում ամեն ամիս դեսպանատունն անցկացնելու է հյուպատոսական աշխատանք: Հանդիպման օրն ու վայրը կարե-